ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. ապրիլի 22-ից 24-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն կատարած գործուղման

արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

Արմեն Հայրապետյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Գործուղման վայրը և ժամկետները՝

Քաղաք Մայնի Ֆրանկֆուրտ, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, 2019թ. ապրիլի 22-ից 24-ը

3. **Հրավիրող կողմը՝**

Վերականգնման վարկերի բանկ

4. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն «Վերականգնվող էներգետիկա» (ԳՀՀ-ՎԷ) ծրագրի Դիտորդ խորհրդի 27-րդ և «Միկրո, փոքր և միջին ձեռներեցության աջակցում» (ԳՀՀ-ՄՓՄՁ) ու «Բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում» (ԳՀՀ-ԲՖ) և «Գյուղատնտեսության Ֆինանսավորում» (ԳՀՀ-ԳՖ) ծրագրերի Դիտորդ խորհրդի 37-րդ համատեղ նիստին:

5. **Քննարկված թեմաները՝**

Մայնի Ֆրանկֆուրտում տեղի ունեցած Դիտորդ խորհրդի նիստի շրջանակներում քննարկվեց Գերմանահայկական հիմնադրամի ընթացիկ գործունեությունը. մասնավորապես, վերոնշյալ նիստերի շրջանակներում քննարկվել են Գերմանահայկական հիմնադրամի ընթացիկ գործունեությանը, կատարողականին, փոքր և միջին ձեռնարկությունների աջակցությանը, բնակարանային շուկայի կայուն զարգացմանը, վերականգնվող էներգետիկայի և գյուղատնտեսության ոլորտի զարգացման վարկային ծրագրերին, ինչպես նաև գյուղատնտեսության ապահովագրության պիլոտային ծրագրին առնչվող հարցերը և այլն:

Նախ, ներկայացվեց ԳՀՀ ԾԿԳ հիմնարկի 2018թ. ծախսերի կատարողականը և հաստատվեց 2018թ. ԳՀՀ հաշվետվությունը:

Այնուհետ, ներկայացվեց նաև «Վերականգնվող էներգետիկա» (ԳՀՀ-ՎԷ) ծրագրի 3-րդ փուլի առաջընթացի վերաբերյալ հաշվետվությունը, ինչպես նաև քննարկվեցին վերջինիս 4-րդ փուլի նախապատրաստմանն առնչվող մի շարք հարցեր:

Նիստի ընթացքում քննարկվեցին Բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացման ծրագրի առաջընթացը, հաստատվեց նշյալ ծրագրի 4-րդ փուլի ներքո հիփոթեքային վարկավորման 6.5% տոկոսադրույքը և գյուղական ու էներգետիկայի արդյունավետության հիփոթեքային վարկավորման 5.5% տոկոսադրույքը:

Այնուհետ ներկայացվեցին ԳՀՀ-ՄՓՄՁ ծրագրերի ներքո գրանցված շուկայի հիմնական զարգացումները, վերջիններիս առաջընթացը, նշյալ ծրագրերի կատարողականի հաշվետվությունները, ինչպես նաև որոշում կայացվեց ԳՀՀ-ՄՓՄՁ ծրագրի տոկոսադրույքը թողնել անփոփոխ՝ 7.5%-ի չափով: Որոշվեց նաև «Էվոկաբանկ» ՓԲԸ-ին ներառել ծրագրի ֆինանսավորման կառույցների ցանկում:

Ներկայացվեց «Գյուղատնտեսության ֆինանսավորման ծրագրի» առաջին և երկրորդ փուլերի համախմբված զեկույցները և վարկավորման տոկոսադրույքները թողնել անփոփոխ՝ 6.25%:

Ներկայացվեցին «ԳՀՀ-ՄՓՄՁ էներգետիկայի արդյունավետության միջոցների ֆինանսավորում» ծրագրերի կատարողականը և վերջինիս առաջընթացի վերաբերյալ հաշվետվությունը: Որոշվեց ծրագրի վերաֆինանսավորման տոկոսադրույքը կրկին անփոփոխ 6.75% չափով:

Նիստի ընթացքում քննարկվեց նաև ԳՀՀ ծրագրերի գյուղատնտեսական ապահովագրության հարցը, և որոշվեց իրականացնել ԳՀՀ ծրագրերի ներքո տրամադրված գյուղատնտեսական վարկերի պարտադիր ապահովագրություն՝ «Գյուղատնտեսությունը ապահովագրողների ազգային գործակալություն» ՀԿ-ի կանոնների և կարգավորումների համաձայն: Նշենք նաև, որ պիլոտային ծրագրով ընտրվել են Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Արագածոտնի, Վայոց Ձորի, Տավուշի մարզերը: ՀԿ ֆինանսավորումն ակնկալվում է իրականացնել բացառապես մասնավոր հիմունքներով՝ ապահովագրական ընկերությունների միջոցով:

Հանդիպման ընթացքում ներկայացվեց նաև Գերմանահայկական հիմնադրամի աուդիտի թիմի կողմից իրականացված աուդիտի արդյունքների մասին հաշվետվությունը:

Դիտորդ խորհուրդը քննարկեց օրակարգով նախատեսված բոլոր հարցերն ու ամփոփեց դրանք:

7. Գործուղվողը՝

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Արմեն Հայրապետյան

8. Ստորագրությունը, ամսաթիվը